

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇՒԱՐՔ

Ս Ա Բ Բ Ի Ա Ն Ո Ս

107. — Այս միջոցին Միհրդատ փնջուցած էր իւր շրջանը Պոնտոսի մէջ և գրաւելով Բանտիգարբէյ, Պոնտոսի մըտից վրայ եւրոպական վաճառանոց մը վաճառականաց համար, սպաննեց իր որդին Քսիփարը կիրճին քով մօրը այսպիսի մէկ յանցանքին համար: Միհրդատ դղեակ՝ մ'ունէր, ուր գետնափոր ծածուկ շտեմարաններ կային երկաթապատ պղնձէ բազմաթիւ անօթներով, որոնց մէջ առատ դրամ զետեղուած էր: Սղարդոնիկէ՞, Միհրդատայ կանանց կամ հարճերէն մին, որ գիտէր այդ դղեակին գանձերը և անոր պահապանն էր, Միհրդատայ այս ուղեւորութեան միջոց յանձնեց զայն Պոմպէոսի, յայտնեց նաև ծածկուած գանձերը այս պայմանաւ միայն, որ եթէ Պոմպէոս իր Քսիփար որդին բռնէր, զայն ազատէր՝ Պոմպէոս ալ զբաւելով ամբողջ դրամները խոստացաւ անոր որդւոյն փրկութիւնը, և շնորհեց նաև անոր որ առնու տանի իւր հետ ինչ որ իրեն կը պատկանէր: Միհրդատ, իմանալով պատահածը, կիրճին քով սպաննեց զՔսիփար, մինչդեռ միւս փախնց վրայէն կը նայէր մայրը, և յետոյ նետեց զայն անթաղ, Յանցաւոր մայ-

րը պատժելու համար նա շխշեց որ Քսիփար իր որդին էր:

Պոմպէոս Ասորիքի մէջ էր և չէր գիտեր թէ ինչ կը գործէր Միհրդատ, երբ Միհրդատ դեսպաններ զրկեց իրեն, իւր անուամբ խոստանալու Հռովմայեցոց տարեկան տուրք մը իրեն հայրենի պետութեանց համար: Պոմպէոս պատասխանեց որ պէտք էր Միհրդատ անձամբ գալ ինչպէս որ եկած էր Տիգրան. և երբ իմացուցին, Միհրդատ ըսաւ. «Քանի որ Միհրդատ եմ, բնաւ պիտի չհանդուրժեմ այսպիսի բան. իմ տեղս կը զրկեմ որդիներս և բարեկամներս »: Իւ իսկոյն սկսեալ բազմաթիւ բանակներս՝ ժողովել բնիկներէ և գերիներէ, շինեց առատութեամբ զբահներ ու զէնքեր, նետեր և մեքենաներ, չինայելով ամենեկին բանի մը, և ոչ իսկ հերկող եղներու, մորթեր առնելու համար, և տուրքեր դրաւ ամէն բանի մէջ, նոյն իսկ ամենաչնչին ստացուածներու համար: Այս ամենուն վրայ իրեն հարկապահանջները բազմաթիւ նախատինքներ ալ բարդեցին շատերու առանց իրեն գիտնալուն, որովհետև երեսին վրայ թարախալից այտուց մ' ելած ըլլալով, միայն երեք ներքինիներ կը տեսնէին ու կը խնամէին զինքը:

108. — Հիւանդութենէն առողջանալով և արդէն կազմած ըլլալով վաթսուն ընկատներէ բանակ մը, որոնց իւրաքանչիւրը վեցհարիւր զինուորէ էր, և դեռ ուրիշ բազմութիւն, և նաւեր, պատրաս-

1. Գիտն կասսիոս այս գրեակը կ'անուանէ Սինթիկոս գոր անշուշտ պէտք չէ շփոթել նախընթացաբար յիշուած Սինուրկիս կամ Ինուր գրեակին հետ որ նոյնպէս արքունի գանձատուն մ'էր: (Գէթ 37):

2. Պլուտարքոս Պոմպէոսի վարքին մէջ այսպէս կը գրէ Սղարդոնիկէի նկատմամբ. «Սա դուստր էր, ինչպէս կ'երեկ, ծերունի երգիչ գուտանի մը և աղքատ բողբոջ: Միհրդատայ խնջոյից պահուն երգելով իսկոյն այնպէս գրաւեց թագաւորին սիրտը որ ուզեց միշտ իւր քով պահել զայն և արձակից ծերունին, որ շատ տգիտ մեկնեցաւ և ոչ

իսկ միակ բարեւէր այտայտութիւն մը տեսներուն համար»:

3. Գիտն կասսիոս հետաքրքրական պարագայ մ'ալ կը պատմէ այս նկատմամբ. «Սղարդոնիկէ, կ'ըսէ, կինն էր Միհրդատայ, որուն դէմ յեցուած էր կատաղութեամբ ու զայրոյթով, իրմէ լքուած ըլլալուն պատճառաւ. սա իրեն քով թողուած մի քանի պահապաններն արձակելով, այնպէս պատրուակելով իրրէ թէ շրջակայքը պաշարներ ժողովելու կը զրկէր գանձը, ներս ընդունեցաւ Հռովմայեցիները»:

տած ըլլալով նաև բոլոր այն բերդերը, զորս իրեն հիւանդութեան ժամանակ իր հրամանատարները գրաւած էին, զինուորաց մէկ մասն անցնել տուաւ ի Ֆրանսա կորէա, որ Պոնտոսի մտից վրայ վաճառականական քաղաք մ'էր մինչդեռ Պոմպէոս զեռ զբաղած էր Ասորիքի մէջ. և զայս ըրաւ որպէս զի միւս միւս կողմէն ազատ ելը ունենայ: Գաստր Ֆրանսա կորէացին, որ շատ նեղութիւն քաշած էր արդէն թագաւորին Տրիփոն ներքինիէն, յարձակեցաւ և սպաննեց զՏրիփոն մինչդեռ քաղաք կը մտնէր, և յորդորեց ամբոխը ապստամբութեան և ազատութեան. ամբոխն ալ, գիտնալով որ միջնաբերդը գրաւուած էր արդէն Միհրդատայ Արտափեռնէս և միւս որդիներէն, շրջապատեց զայն փայտակոյտերով և հրդեհեց: Միհրդատայ որդիքը Արտափեռնէս և Գաբրէ ու Գաբրէս և Ոսատրէս և Եւպատրէ աղջիկը անձնատուր եղան հրդեհէն վախնալով և դուրս փոխադրուեցան: Ասոնցմէ միայն Արտափեռնէս գրեթէ քառասնամեայ էր, միւսները բոլոր կայտառ պատանինքը էին: Սակայն կղէպատրա, Միհրդատայ միւս աղջիկը, չուզեց բնաւ անձնատուր ըլլալ. այնպէս որ հայրը անոր վեհաձայն արտին վրայ զարմացած, շատ նաւակներ զրկեց և զինքը բերդէն ազատեց:

Բոլոր միւս զոհակներն ալ, զորս զեռ նոր գրաւած էին Միհրդատայ հրամանատարները, տեսնելով Ֆրանսա կորէայի ըրածը, իրենք ալ ապստամբեցան, և էին Քերտոնեոն, Թէոդոսիա, Նիմֆոն և միւս ամէնքը որ Պոնտոսի ափերը կը շրջապատեն, ամէնքն ալ պատերազմի համար ամենայարմարը: Միհրդատ տեսնելով այս յաճախ ապստամբութիւնները և միանգամայն կասկածելով իրեն զինուորներէն,

որոնք զինուց բռնադատուելով յարատև և հաւատարիմ պիտի չըլլային, և դարձեալ որովհետև ամենածանր հարկեր կը պահանջէր, ինչպէս գիտնալով նաև որ երբ վեհապետի մը բաղդը խանգարուի, զինուորաց փոփոխամիտ բարքէն հաւատարմութիւնն ալ կը պակսի¹, իրեն ներքինիներու ձեռքով, Սկիւթիա զրկեց իրեն աղջիկները, այն տեղի իշխաններու հարսնութեան, և կը խնդրէր փոխադրած որ ըստ կարելոյն շուտով իրենց բանակներով իրեն օգնութեան գան: Հինգհարիւր զինուորաց խումբ մը կ'ընկերէր աղջիկներու, սակայն հազիւ մի քիչ հեռացան Միհրդատէն, արդէն իսկ ներքինիներու դէմ բարկացած² անոնցմէ կրած հարստահարութեանց պատճառաւ, զամէնքն ալ սպաննեցին, և աղջիկները տարին առ Պոմպէոս:

109. — Թէպէտև զրկուած այնքան զաւակներէ և զղեակներէ և բոլոր իր թագաւորութենէն, և թէպէտ այլևս բուրովին անկարող էր պատերազմելու և ոչ ալ յոյս մ'ունէր Սկիւթացոց օգնութեան, այնու հանգերձ թագաւորն նոյն իսկ այս պահուն հասարակ խորհուրդներ չունեցաւ, և ում իր աղետից համապատասխան մտածութիւններ, այլ կը խորհէր անցնիլ ի Գաղղիա կեցտաց քով, զորս արդէն երկար ժամանակէ ի վեր սերտիւ բարեկամացուցած էր իրեն բուն իսկ այս գաղափարին համար, և յետոյ անոնց հետ ասպատակել յիտալիա, յուսալով որ նոյն իսկ իտալիայէն շատերը պիտի միանային իրեն հետ, Հռովմայեցոց դէմ ունեցած ատելութեանց պատճառաւ: Պատմած էին իրեն որ Աննիբալը ալ այսպէս ըրաւ երբ Սպանիոյ մէջ խորտակուեցաւ, և այսու ամենահաւոր եղաւ Հռովմայեցոց: Գիտէր նաև որ զեռ քիչ առաջ տօգնութեան

1. Գիտն կաստիոս դիտել կու տայ հոս, որ առ ոչինչ կը ծառային զէնքերը և հրպատակաց բաղձութիւնը, երբ անոնց սիրտն ու բարեյտար կամքն գրաւուած չէ, նա

մանաւանդ, ասոնք որքան աւելի բազմաթիւ ըլլան, այնքան աւելի վտանգաւոր են, քան ի որ կը պակսի հաւատարմութիւնը:

պատճառաւ իտալիա սպաստմբած էր Հոովմայեցիներէն, յարատե պատերազմելով անոնց դէմ, մանաւանդ թէ ընդդէմ անոնց Սպարթակոսի կողմը բռնած էր, որ սուսերամարտիկ մ'էր և ոչ մէկ աստիճան ունէր: Այսպիսի թոհչներով արդէն իւր միտքը կը խոյանար դէպ ի Գաղղիա. բայց երբ իւր յանդգնութիւնը աւելի լուսաւոր և փայլուն կ'երևար իրեն, բանակը՝ բուն իսկ ձեռնարկին վեհուփեան պատճառաւ, մերժեց մտնել այսպիսի երկար արշաւի, անձանօթ երկիրներու մէջ չէ, և ընդդէմ մարդիկներու որոնց դէմ նոյն իսկ իրենց հայրենեաց մէջ չէին կրցած գործել: Բանակը կը մտածէր որ Միհրդատ այլևս յուսահատած իրեն վիճակին վրայ կ'ուզէր աւելի մեռնիլ գործելով, և արքայական շքեղութեամբ, քան թէ առանց գործելու: Այնուհանդերձ դեռ կը մնային իրեն ջող և չէին քնա խլըրտիր. որովհետև այն թագաւորը սովորական մէկը, և թշուառութեանց մէջ անգամ այնքան թեթևութեամբ արհամարհելի մէկը չէր¹:

110. — Այս վիճակի մէջ էին իրերն, երբ Փառնակ, Միհրդատայ ամենասիրելի որդին, զոր այնքան անգամ յաջորդ յայտարարած էր իր գահուն, կամ այն պատճառաւ որ մինչդեռ կարելի էր թերևս ներուռն ստանալ՝ վախցաւ առաջարկուած արշաւանքէն, և թագաւորութիւնը բոլորովին կորսնցնելէ եթէ հայրը զձեռքերով իտալիա անցնէր, և կամ ուրիշ պատճառներու և փափաքներու համար, իւր

հօրը դաւաճանն եղաւ: Արդէն իսկ դաւակնիցը յայտնուած էին, և տանջանքներու ենթարկուած, երբ Մենոփանէս հաւանեցուց զթագաւորը որ պէտք չէր իրեն մինչև այն ատեն ամենասիրելի որդին սպաննէր, մինչ առագաստ պարզելու վրայ էր: Հաւանեցուց զթագաւորը որ այսպիսի դիմադարձութիւնը հետևանք էին պատերազմին, և երբ այս դադրի անոնք ալ կը դադրին: Միհրդատ ունկնդիր եղաւ այս խօսքին և թողութիւն շնորհեց իր որդւոյն:

Սակայն որդին վախնալով հայրենի ծածուկ բարկութենէն, և գիտնալով որ բանակը յամառած էր ընդդէմ արշաւանքին, գիշեր ժամանակ գնաց թագաւորին կողմն անցած Հոովմայեցուց առաջին գունդին, որ Միհրդատէն շատ հեռու բանակած չէր, և չափազանցեց անոնց, որոնք արդէն լաւ գիտէին թէ որքան մեծ էր, իտալիա արշաւելու վտանգը, և ընդհակառակն յուսացուց զիրենց լիուրի ակընկալութեամբ եթէ իրեն հետ մնային, որով և ապստամբեցուց զանոնք հօրը դէմ: Ասոնց մէջ այս համոզումը ներշնչելէ վերջ, մի և նոյն գիշերուան մէջ Փառնակ մարդիկ զրկեց նաև զինուորաց միւս գունդերուն, և զանոնք ալ իր կողմը շահեցաւ: Հազիւ դեռ արշալոյսը կը ծագէր, երբ առաջին աղաղակը բարձրացուցին թագաւորին կողմն անցած Հոովմայեցիները, և յետոյ մի առ մի կրկնեցին զայն իրարու մերձաւոր գունդերը, այնպէս որ անոր ձայնակեցեցաւ նաև նաւային խումբը:

1. Գեղեցիկ զովեստ մ'ալ կու տայ Միհրդատայ աննուածելի ուղոյն վեհութեան նկատմամբ նաև Կիոն Ասասիոս. «Միհրդատ, կ'ըսէ, մարդ մ'էր ծնած մեծամեծ գործեր կատարելու համար, որ ամենայն ճախ փորձած ըլլալով թէ՛ յաջողակ և թէ՛ ձախողակ բաղդն, կը համարէր որ պէտք է ամէն ինչ փորձել և քնա չլքանիլ ի յուսոյ բաց աստի համոզուած էր միանգամայն, որ երբ ձեռնարկներու արդեանց մէջ յուսախարքաւոր, պէտք էր աւելի նախընտրել կրօ

սուրի իւր թագաւորութեան հետ, քանի որ դեռ հոգւով աննկուն էր, քան թէ թագաւորութենէն անկեալ՝ ապրիլ դեռ անարգ և նախատալից վիճակի մը մէջ: Ի՞նչ նա վարուեցաւ միշտ իր այս համոզման համաձայն. որովհետև որքան աւելի ոգեսպառ կ'երևէր մարմնոյ տկարութեամբ, այնքան աւելի զօրաւոր կը հանդիսանար հոգւոյ արիական զօրութեամբ, այնպէս որ ուղոյն խորհուրդները կ'օժանդակէին մարմնոյն անկարողութեանը»:

Թիւրքաւ մաճնքն ալ հաւասարապէս տեղեակ չէին իրին, այնու հանգեբո՞ւ մաճնքն ալ ձայնակցեցան, որովհետեւ դերաւ ենթակայ են փոփոխութեանց և արհամարհելով թշուառները լաւագոյն բան մը կը յուսան նորութեանց մէջ: Շատերը, չգիտնալով բնաւ եղած համաձայնութիւնները, կարծելով թէ մաճնքն ալ արդէն կաշառուած են և պիտի անարգութիւն եթէ միայն իրենց բողոքեն, արձագանգ տուին այդ ապատարութեան աղաղակին աւելի վախով և ի հարկէ՝ քան թէ իրենց յօժարակամ զգացմամբ: Միհրդատ զարթնելով աղաղակներէն, մարդ զրկեց իմանալու համար թէ ինչ կը նշանակէին անոնք: և բանակը չծածկեց, այլ մամիցը միաձայն աղաղակեցին թէ «Ի՛նչոքն որ որդին թագաւորէ, երիտասարդ մը փոխանակ ծերուն որ անձնատուր եղած է ներքինինքս, սպաննած է իր որդիքը, հրամանատարները, բարեկամները, բազմութեամբ»:

111. — Այս լսելով Միհրդատ ելաւ որ ամբոխին խօսի, մինչդեռ մի և նոյն ժամանակ բերդապահաց բազմութիւն մ'ալ կը խուժէր դէպի այն Հոռովայեցոց բանակը որ թագաւորին կողմն անցած էին. սակայն ասոնք պատուիրեցին որ չմօտենան իրենց մինչև որ վստահելի զբաւկան մը չընծայեն թագաւորին հանդէպ (և այսու կ'իմանային զՄիհրդատ) աններելի գործով մը: Անոնք անյապաղ սպաննեցին թագաւորին ձին որով կը փախչէր¹, և իբրև թէ արդէն իսկ յաղթական ըլլային, ողջունեցին թագաւոր զՓառնակ. այն պահուն յանկարծ մէկը խոշոր պապիրոս մը բերաւ տաճարէն և զալարելով

զայն պսակած և դրաւ անոր զլուխը: Երբ ըստին հովանոց պատշգամբ մը տեսնելով այս եղածները, մին միւսին ետևէն պատուիրակներ զրկեց առ Փառնակ, որ թոյլ տայ իրեն ազատ փախչելու: Սակայն այս զրկուածներէ և ոչ բազ մին յետ դառնալով, վախցաւ որ մի՛ գուցէ զինքը մատնեն Հոռովայեցոց: Ուստի պահակ զինուորաց գունդին և բարեկամաց, որ դեռ իրեն ջով մնացած էին, զովեստներ խօսելով, զրկեց զանոնք ալ նոր թագաւորին ջով, սակայն բանակին զօրականք առանց որ և է պատճառի մը, անոնցմէ շատերը մեռուցին մինչդեռ կը մօտենային: Յետոյ բացաւ թոյնի սրուակը զոր միշտ սուրին ջով իր հետ կը կրէր, խառնեց բաժակի մէջ: Միհրդատիտէ և Նիւսա, իր երկու զստերը, որոնք հարսնացու խօսուած էին կրկնապատի և կիպրոսի թագաւորաց և դեռ իրենց հօրը ջով կը մնային, կը խնդրէին և կը հետապնդէին որ այդ թոյնէն իրենք խմեն հօրմէն առաջ, և բռնած արգիւլեցին իրենց հայրը որ չըկանխէ քան զիրենք, մինչև որ ապագաւ լաթն առին և անկեցին անկէ: Շատով ազդեց ըմպելիքն իրենց վրայ. սակայն ի Միհրդատ, այնու հանգեբո՞ւ որ յուզումս լից աստին անդին կը շրջէր, ըմպելիքն ազդեցութիւն չունեցաւ, և այս՝ այն անթեղայներուն պատճառաւ, զորս սովորութիւն ըրած էր միշտ առնուլ, և որոնք այսօր ալ Միհրդատականք² կը կոչուին, թոյներու ազդեցութիւնը բնաջինջ ընկելու համար: Տեսաւ այն ատեն կեղտաց հրամանատար մը, որուն անունն էր Պիթրոկիթ. «Ո՛հ, ըսաւ, ջու բազուկդ օգնեց ինձ շատ

1. Հոս կը թուի թէ բնագրի խանգարում մը տեղի ունեցած է, որովհետև այս փախուստը չյարակցիր անմիջապէս յետոյ պատմուածներուն հետ:

2. Այս անթեղայներու նկատմամբ կը խօսի նաև կելսոս (Գիբր Ե. Գլ. 23) և P. Hardouin (*Ad Plinium*, Գիբր Ի. Գլ. 8 և Գիբր ԽԵ. Գլ. 2). Յուստինոս ալ կը հաստատէ Միհրդատայ այս սովորութիւնը,

այս ինքն զեղթափներ գործածելը՝ որպէս զի իւր ծածուկ թշնամեաց թոյներու որոգայթներէն պատասպարուի, հետևեալ խօսքերով: Venenum metuens antidota saepius bihit, et ita se adversus insidias exquisitis tutioribus remediis stagnavit, ut ne volens quidem senex veneno mori putnerit. (Գիբր I. Գլ. 2):

անգամ թշնամեաց մէջ, բայց հիմա աւելնեալ անգամ պիտի ըլլայ ինձ եթէ զիս բառնաս մէջտեղէն մինչդեռ վտանգ կը սպառնայ ինձ Հոռոմայեցոց յաղթանակի հանդիսին տարուելու, ինձ՝ որ ոչ երբէք հպատակ այլ թագաւոր եղած եմ այնքան ժամանակ, և այնքան թագաւորութեանց վրայ: Իմ վրաս չազդէր թոյնը հակադեղեբու ըրած վարժութեանցս պատճառաւ: Սակայն ես որ նախատեսեցի աւելնիս, ամէն ինչ ապահովցուցի ուսեւընաց նկատմամբ, չկրցայ զգուշանալ թագաւորաց համար այնքան մահացու և այնքան սովորական թոյնէն, որ է բանակներու, որդոց և բարեկամներու նենգութիւնը»: Պիթուիթ յուզուած այս խօսքէն, օգնեց թագաւորին ինչպէս որ նա կը խրնդէր¹:

112. — Այսպէս մեռաւ Միհրդատ, Պարսից թագաւոր՝ Դարեհ վշտասպէն վերջ՝ տանուվեցեբորդ, և ութերորդ՝ այն Միհրդատէն որ առաջին անգամ Մակեդոնացոց լուծը խորտակեց և թագաւորեց Պոնտոսի վրայ: Ապրեցաւ վաթսուն և ութ կամ վաթսուն և ինը տարի և թագաւորեց յիսուն և եօթ տարի, որովհետև զեռ պատանեակ մ'էր երբ թագաւորութեան բարձրացաւ: Տիրապետեց մերձակայ բարբարոսաց վրայ, և իրեն հպատակեցուց սկիւնացոց շատերը: Քառասուն տարի ամե-

նահուովու պատերազմ մղեց Հոռոմայեցոց դէմ, և անոնց դէմ կուռած պահերուն՝ գրաւեց շատ անգամ Բիւթանիան և կապաղովկիան, արշաւեց ընդ Ասիա, Փոնուզիա, Պափլագոնիա, Գաղատիա և Մակեդոնիա: Թարձակելով Եռնաստանի վերայ գործեց շատ և մեծամեծ իրեր, տէր դառնալով ծովերու, կիլիկիոյ ծովէն մինչև Բոնիականը, մինչև որ Սիդղա դարձեալ վերածեց զինքն իր հայրենի թագաւորութեան սահմաններուն՝ հարիւր վաթսուն հազար զինուոր կորուսանելէ վերջ: Ի հեճուելս այսքան կորստեան դիւրութեամբ վերստին նորոգեց պատերազմը: Մղեց պատերազմներ ամենէն մեծ հրամանատարներու դէմ, և յաղթեցին իրեն Սիդղա, Լուկուլլոս և Պոմպէոս, սակայն ոչ մէկ անգամ միայն ինքն ալ յաղթեց անոնց, Բանեց և իրեն հետ բանտարկեալ շրջեցուց զԼուկիոս Գասսիոս Քուինդոս, Որբոս և Մամիոս Աքուիլիոս, սպաննեց այս վերջինս, իրրև զխաւոր պատճառ պատերազմին, և յետոյ միւսները վերջուտին յանձնեց Սիդղայի: Թաղթեց Ֆիմպրիայի և Մուրենայի, Գոգղա հիւպատոսին, Փարսիսի և Իրիարէոսի: Եղաւ մշտ վեհանձն և արխաիտ՝ նաև թշուառութեանց մէջ: Թէպէտ պարտուած, չթողուց ընաւ առանց փորձելու որ և է միշտ տազնապեցնելու համար Հոռոմայեցի-

1. Գիտն կասսիոս փոքրիկ պարագայի պարբերութեամբ մը կը պատմէ այս մահը, թէպէտ իր խօսքերն ալ խառնակ և անյարիւր կ'երևին. «Միհրդատ, կ'ըսէ, ամէն ջանք ըրած էր մահուամբ ինքզինքը գրաւելու, և առաջուց թունաւորմամբ սպաննելով իր կիւները, և իւր միւս զաւակները, խմած էր բովանդակ մնացած թոյնը. բայց սակայն ոչ թոյնով և ոչ ալ սուրով՝ զոր իր կուրծքը մխեց, կրցաւ մեռնիլ. որովհետև իւր չափազանց զգուշաւորութեան պատճառաւ, և ամենօրեայ թոյներու դէմ դեղթափներ գործածելու սովորութեան համար, այնպէս վարժած էր, որ այդ թոյնը որքան ալ մահացու էր, իրեն համար աղետալի արդիւնք մը չունեցաւ: Դոյնպէս ինքն իրեն տուած

սուրի հարուածը չեղաւ բաւական զօրաւոր, իր բաղուկը ծերութենէն և կրած այնքան ձախողութիւններէ զօրութիւնը կորուսած ըլլալուն պատճառաւ, ինչպէս նաև վերջերը գործածած ամէն տեսակ թոյներու պատճառաւ: Ուստի չկարենալով անձամբ ինքզինքը մեռցնել և տեսնելով որ գուշակած ժամանակէն աւելի պիտի սպրի, այն նուիրակներն իսկ զորս զրկած էր ինքն իր որդւոյն դէմ, յանկարծակի ներս խուժելով վերստին՝ սուրբով ու նիզակներով փութաջուցին իրեն մահը: Եւ քիչ վերջ ալ կը յաւելու դարձեալ. « Բայց սակայն մեռաւ նա, մաս մը թոյնէն մաս մ'ալ սուրէն որով խոցուած էր թէ՛ իր իսկ ձեռքով և թէ՛ թըշ նամեաց ձեռքով »:

ները, այնպէս որ դաշնակցեցաւ Սաննի-
դաց և կեղտաց հետ, և դեպպանութիւն
դրկեց Սերգորիստի Ի Սպանիա: Յաճախ
վերաւորուած՝ ըլլայ պատերազմներու մի-
ջոց՝ ըլլայ դարանակալութեանց պատճա-
ռաւ, ոչ մէկ բան կասեցուց իր ձեռնարկ-
ներէն, նոյն իսկ ծերութեան միջոց: Ոչ
մէկ դարանակալութիւն զաղանի մնաց
իրմէ, և ոչ իսկ վերջինը, սակայն ինքը
կամաւ զանցառու եղաւ, և այնու կոր-
սուեցաւ: Սայքան ապերախտ է եղեռնա-
գործը երբ ներումն կը գտնէ! Ինքն ալ
արիւնարբու էր և անզուժ ամենուն հան-
դէպ. սպաննեց մայրը, եղբայրը, երեք
որդիքը և երեք աղջիկները: Մարմնով
բարձրահասակ էր, ինչպէս յայտնի կը
ցուցնեն իրեն սպառազինութիւնը զորս
դրկեց նեմէա և Դեզիփա, և այնքան զօ-
րաւոր՝ որ կրցաւ մինչև ցվերը ձիավարել
և նետ արձակել, և մէկ օրուան մէջ հա-
զար սղադիոն ընթացաւ, հետզհետէ փո-
փոխելով ձիերը որ իրեն համար պա-
տրաստուած էին սահմանեալ հեռաւորու-
թեանց վրայ, և կը կառավարէր տաս-
նուվեց ձիերէ լծեալ կառք մը: Սիրող
եղաւ Յունական մատենագրութեան, մինչև
իսկ անոնց սրբութիւնքը կը յարգէր, կը
զբօսնուր նաև երաժշտութեամբ. սակայն
որքան ժուժկալ և համբրատար էր այն-
քան յոգնութեանց մէջ, անզուպ էր սի-
րոյ մասին:

118. — Սայպիսի մէկն եղաւ Միհրդ-
դատ Իւլպատոր կամ Դիոնիսիան կոչուա-
ծը: Հռովմայեցիք իմանալով իրեն մահը,
հանդէս կատարեցին ուրախութեան, իրեն
վերջապէս ազատած այնքան տաժանե-
ցուցիչ թշնամիէ մը: Փառնակ հռաթիով
մը առ Պոմպէոս զրկեց ի Մինոպ իւր մե-
ծեալ հօրը դիակը¹, և զանոնք որ զՄանիոս
ձերբակալած էին. զրկեց բազմաթիւ պա-
տանդներ՝ յոյներէ և բարբարոսներէ, և ա-

դերսեց որ յանձնուի իրեն իւր հայրենի
թագաւորութիւնը, կամ զէթ Պոսփորիքը,
զոր արդէն Մակար իւր եղբայրը զբաւած
էր, Միհրդատէն իրեն շնորհուելով: Պոմ-
պէոս յանձնեց իւր պաշտօնակալաց Մի-
հրդատայ մարմինը և թաղման ծախքերը,
հրամայելով որ արքայավայել յուղարկա-
ւորութիւն կատարուի և զրուի ի Մինոպ
թագաւորաց դամբանարաններու մէջ: Ու-
րովհետև կը յարգէր զՄիհրդատ իւր մե-
ծանձն գործերուն համար՝ իրեն լաւա-
գոյնն իր ժամանակի թագաւորաց: Յետոյ
զփառնակ Հռովմայեցուց դաշնակից ու
բարեկամ մ'ըբաւ, որովհետև իտալիան
ազատած էր մեծամեծ տազնապներէ, և
շնորհեց իրեն որ թագաւորէ Պոսփորի
վրայ, ի բաց առեալ Ֆրանկորէա քաղա-
քը՝ զոր ազատ բոլորովին և ինքնավար
կացուց, որովհետև նախ քան զամէնքը
սպատամբած էր ընդդէմ Միհրդատայ, որ
արդէն մեծապէս սպառազինուած և պա-
տրաստ էր նաւերով, բանակով և ուրիշ
բերդաքաղաքներով, ուսկից պիտի սկսէր
պատերազմը, այնքան որ ուրիշ ամենուն
ալ յորդոր եղած էր սպատամբութեան,
և պատճառ վերջապէս Միհրդատայ քալ-
քայման:

114. — Իսկ ինքն Պոմպէոս, այսպիսի
պատերազմով մը բառնալով ի միջոյ բո-
լոր ծովերու հէնքերը և թագաւորաց ա-
մենամեծը, պատերազմելով՝ բաց ի պոն-
տական ժողովրդոց, նաև կողքիսացուց և
Աղուանից դէմ, ընդդէմ Վրաց և Հայոց
և Մարաց և Արաբացուց, Հրէից և ուրիշ
արեւելեայց, ծաւալեց Հռովմէական իշխա-
նութիւնը մինչև յԵգիպտոս: Չեկաւ սա-
կայն յԵգիպտոս, որքան ալ նոյն պա-
հուն սեղական ժողովուրդն սպատամբու-
թեան մէջ էր ընդդէմ իր թագաւորին, և
որքան ալ ինքնին թագաւորն կը հրաւի-
րէր զինքը զրկելով իրեն ընծայներ, դրամ-

1. Պուտարքոս կ'աւանդէ որ Պոմպէոս
չհանդուրժեց Միհրդատայ անշնչացեալ դիա-
կը տեսնելու: Ինչպէս որ յետոյ պարագա-

ներու և ժամանակաց փոփոխութեամբ և ոչ
իսկ կեսար հանդուրժեց տեսնել նոյն ինքն
Պոմպէոսի պիակը:

ներ և հանդերձանք ամբողջ բանակին հա-
մար, կամ այն պատճառաւ որ վախցաւ
թերևս դեռ ծաղկեալ պետութեան մը մե-
ծութենէն, կամ այն պատճառաւ որ թե-
րևս վախցաւ իւր հակառակորդաց նա-
խանձէն, կամ հակառակ վճռեցին պատ-
գամք, կամ ուրիշ յատուկ պատճառներ
զորս պիտի յիշատակենք Եղիպտակոս պա-
տերազմաց պատմութեան մէջ: Յաղթահա-
րած ազգերէն, զոմանս ազատ հռչակեց
դաշնակից ընելով զանոնք Հռովմայեցոց,
զայլս ալ ուղղակի ենթարկեց հռովմա-
կան պետութեան, զուրիշները կանգնեց ի
թագաւորութիւն, ինչպէս Հայաստանը՝ զոր
տուաւ Տիգրանայ, Պոսփորը՝ տալով Փառ-
նակայ, Կապադովկիան՝ աւա Արտարա-
զան, ուրիշ յաւելուածներով, ինչպէս վե-
րագոյն յիշեցինք: Տուաւ առ Անտիոքոս
կոմագինեցի զԱլեկիա, և ամբողջ գա-
ւառները զոր ասպատակեր և զբաւեր էր
ի Միջագետաց: Կարգեց քառապետներ,
Յունակեղտաց, որոնք այժմ են Գաղա-
տացիք՝ սահմանակիցք Կապադովկացոց,
և հաստատեց հոն զՏէոզարոս՝ իւր ըն-
կերները: Գրաւ զԱտտազոս՝ իշխան ի
վերայ Պափլագոնիոյ, և զԱրիստարքոս՝
կողբիսեան գաւառաց վրայ. անուանեց
զԱրքեղայոս քահանայապետ կոմմանցոց
աստուածուհւոյն, իշխանութիւն՝ որ հոն
համարժէք է թագաւորականի, և անուա-
նեց զԳաստրո Պանակորէացին բարեկամ
Հռովմայեցոց տալով միանգամայն այլոց
ալ շատ երկիրներ և դրամներ:

115. — Կանգնեց շատ քաղաքներ,
ինչպէս Նիկոպոլիս ի յիշատակ յաղթու-
թեան Փոքր Հայաստանի մէջ, ինչպէս ուրիշ
մ'ալ զոր արդէն կանգնած էր Պոնտոսի
մէջ Միհրդատ Եւպատոր և Եւպատորիս
անուանած, բայց յետոյ կործանած էր՝
Հռովմայեցոց կուսակից գտնուելուն հա-
մար, վերջապէս Պոմպէոս վերստին կանգ-
նեց Մանեթրիի անուամբ. Կապադովկիոյ
մէջ նորոգեց զՄաթակ որ պատերազմներէ
աւերուած էր, և ուրիշ շատ տեղեր ալ վե-
րանորոգեց շատ հիմնայատակ կամ փնա-
սուած քաղաքներ, ինչպէս ի Պոնտոս, ի

Պաղեստին, ի Կելեսիրիա, ի Կիլիկիա,
ուր զլիսաւորապէս բնակեցուց ծովահնէն-
քը. և ուր որ ժամանակաւ Սոլի կոչուած
քաղաքը կար, այժմ կանգնուած է հոն
Պոմպէոպոլիս: Միհրդատ Պոնտոսի Գա-
լարի քաղաքը շտեմարան մ'ըրած էր
անօթներու և կահուց. հոն գտնուեցան
երկու հազար եղընգնաքարէ ըմպանակներ,
ոսկիով դրուագուած, և շատ սրուակներ,
կոժեր ու տաշտեր, բաժակներ, մահա-
կալք և անոնք ամէնն ալ գեղապա-
նոյճ. նոյն իսկ ձիերու սանձեր, կրծա-
կալներ և ուսակալ կազմածք ու սարիք,
ամէնքն ալ զոհարեղէններով ընդելուզեալ
և ոսկիով նշուլագեղ: Եւ այս ամէն ինչ
այնքան առատութեամբ որ անոնց բաշ-
խուած երեսուն օր տեկց: Գտնուեցան հոն
այնպիսի իրեր ևս զորս Դարեհ, վշտաս-
պայ որդին, թողուցած էր իր յաջորդաց,
ինչպէս Պտղոմեանց թագաւորութենէն էին
նաև բոլոր այն իրերը զորս կղէոպատրա
կովացոց քով շտեմարանած էր, և կո-
վացիք յանձնած էին Միհրդատայ. ուրիշ
շատերն ալ ինքնին իսկ Միհրդատ հայ-
թայթած էր և հաւաքած, սիրող ըլլալով
միանգամայն, ինչպէս ուրիշ շատ բաներու
մէջ՝ գեղեցկութեան, այսպէս ալ կահա-
ւորութեանց գեղեցիկ զարդերու:

116. — Ձմեռուան վերջնալու ժա-
մանակ՝ Պոմպէոս բաշխեց զինուորական
մրցանակները՝ յաղթական բանակին, առ
իւրաքանչիւր զինուոր տալով հազար հինգ-
հարիւր ատտիկիան դրամներ, և ըստ այժմ
նաև ըստ իւրաքանչիւր աստիճանի առա-
ւելութեամբ՝ տրիրուններու և հարիւրա-
պետներու: Կ'աւանդուի որ այս մրցանա-
կարաշխութիւնը արժեց տասնութեց հա-
զար տաղանդ: Այնուհետև Պոմպէոս ի-
ջաւ յեփեսոս, և անտի պարզելով առա-
գաստներն զէպ ի իտալիա մեկնեցաւ ի
Հռովմ, ի Պրիստիգի արձակելով բանակը
որպէս զի իւրաքանչիւր ոք երթայ իր
հայրենիքը: Եւ այս, իբրև ժողովրդական
գործ, շատ զմայլեցուց Հռովմայեցիները:
Մինչդեռ կը յառաջէր Պոմպէոս՝ շատերը
կը դիմէին իրեն ընդ առաջ, երիտասա-

դագոյնը աւելի հեռու ճանապարհ, իսկ այլը ըստ իւրաքանչիւր հասակի կարողութեան: Ամէնուն ետեւէն ելաւ նաև ծեփակոյտը, գարմացած անոր մեծագործութեանց վրայ. որովհետև ոչ ոք մինչև այն օր ընկճած էր այսքան անարկութիւնամի մը, ստացած էր Հոռովմայ պետութեան այսքան և այսպիսի ազգեր միանգամայն, տարածելով պետական սահմանները մինչև յԻփրատ: Մտաւ ուրեմն Պոմպէտոս ի Հոռով բրետուն և հինգ տարուան հասակին՝, յաղթանակաւ մը շատ աւելի շքեղ ու գեր ի վերոյ քան զամէնն որ իրմէ առաջ եղած էին, որուն հանդէսը տեեց երկու օր ի ցոյց բերուած մարդկանց զանազանութեան ու բազմութեան պատճառաւ, որոնք էին ի Պոնտոսէ, Հայաստանէն, Կապադովկիայէն, Կիլիկիայէն, բոլոր Ասորիքին ազգերէն, Աղուաններէ, Հենիոքացիներէն, Աքէացիներէն, Սկիւթացիներէն և վրացիներէն: Բերաւ նաևազանգիստներու մէջ եօթնհարիւր ամբողջ նաւեր, սակայն յաղթանակի համար բերաւ միայն կառքեր ու զահաւորակներ լի ոսկով և բազմատեսակ պանուանաց առատութեամբ, ինչպէս Գարբին, Վշտապայ որդւոյն անկողինք, նոյն ինքն Միհրդատայ արքունի գահը և զաւագանը, և իրեն զմանկարը ութը կանգուն ձոյլ ոսկի, և զորոշալ արծաթներ եօթանասունհինգ միլիոն հարիւր հազար դրամի. և անհամար կառքեր սպառազինութեամբը և նաևուց ցոռկներով

լի: Ասոնց կը յաջորդէին գերիններու և ծովահէններու բազմութիւնը, սակայն ամէնքն ալ առանց շղթայից և իւրաքանչիւրն իրենց հայրենի զաւառաց տարազներով:

117. — Յաղթական Պոմպէտոս կառքին առկէն կ'երթային ասորապներ, որդիք, զօրավարներ՝ թագաւորաց, որքան որ կային, որոնց պատերազմաւ յաղթած էր, ոմանք կալանաւոր իրրև գերի, այլք իրրև պատանդ, ընդ ամէնն երեքհարիւր քսանուչորս հօգիւ: Ասոնց մէջ կը տեսնուէր Տիգրան, Տիգրանայ որդին, և հինգ որդիք Միհրդատայ՝ Արտափեռնէս, Կիրոս, Ոսարտէս, Գարբին և Քսերքսէս, և երկու զստերքն՝ Որտապարիկ և Եւպատրէ: Ի ցոյց կը տարուէր նաև Ուլգակ՝ կողքիսացւոց թագաւորը և Աոխտարուդոն՝ Հրէից թագաւորը. և իշխանք Կիլիկիոյ և արքայազուն կանայք Սկիւթիոյ, երեք նախարարք վրաստանի և երկու՝ Աղուանից և Մենանդը Լաւողիկեցին՝ որ առաջ հրամանատար էր Միհրդատայ ասպիտմբին: Իսկ անոնք որ ներկայ չէին, կը տարուէին անոնց դիմանկարները, ինչպէս Տիգրանայ և Միհրդատայ, իրենց պատերազմելու, պարտուելու և փախըստեան զիրքերու մէջ: Միհրդատ պատկերացուած էր նաև այն պարագային մէջ յորում պաշարուած՝ լռելիայն կը փախչէր գիշերանց: Վերջապէս պատկերացուած էին նաև ի տես հանդիսականաց իրեն մահուան կերպը, և իր հարմացու

1. Հոս անտարակոյս բնագրի եղծում ու սխալ մը կայ, որովհետև Հոռովմայ շինութեան թուականին 647ին ծնած ըլլալով, և այս երբորդ անգամ յաղթութիւնը կատարելով 692ին, քստասուն և հինգ տարեկան կ'ըլլայ և ոչ թէ երեսունհինգ:

2. «Այնքան մեծ եղաւ այս յաղթանակի հանդէսը, կ'ըսէ Պլուտարքոս, որ թէպէտ և երկու օրուան բաժնաւոր էր, այնու հանդերձ այս ժամանակը բաւական չեղաւ. այլ պատրաստուած հանդիսաւորութիւններէն այնքան քան զանց առնուեցաւ ի տես հա-

նուելու, որ ուրիշ յաղթանակի հանդէս մ'ալ սարքելու և զարգարելու ու չքեղացնելու բաւական էր: Եւ այս Հոռովմայցի հրամանատարին երբորդ յաղթանակն էր. առաջինը շնորհուեցաւ իրեն այն ժամանակ երբ դեռ սոսկ ասպետ էր և Ալիբիկէն կը գառնար Հոռովմայ 673 թուականին: Երկրորդն եղաւ երբ Սպանիայէն վերադարձաւ յաղթական, դեռ նոյնպէս ասպետ վիճակի մէջ, հիւպատոս ըլլալէն օր մ'առաջ, այսինքն է հռովմական 684 թուականի յունուարի կազանդին:

օրիորդաց դիմանկարները, որոնք մասնակից ուզեցին ըլլալ իրենց հօրը մահուան: Այս խումբերու մէջ նկարուած կը տեսնուէին նաև Միհրդատայ միւս զաւակաց և դստերաց դիմագիծերը, որոնք իրմէ առաջ մեռած էին: Հուսկ յետոյ կը տարուէին բարբարոսաց աստուածներու պատկերները, իրենց տեղական պաշտամանց շքեղութեամբ: Կը տարուէր տախտակ մ'ալ այսպիսի վերտառութեամբ. «Բաճուած են ուրիշարիք ցեփատր մարտականք, կոնգոնեցան ուր քաղաքներ կապաղովկոյ մէջ, քսան՝ կիլիկիոյ մէջ և ի կելեսիոյ և Սելեկիոյ՝ Պարսկաստան մէջ: Պարտուած քաղաքներն են Տիգրան Հայր, Պարտովկ վայցին, Ռոյոսե Ադուսանք. Դարեն Մարր, Արևտաս Կարաստցին, Անտիոքոս Կոմոցիկեցին »: Այսպիսի գրութիւն մը կը կրէր տախտակը:

Հուսկ ուրեմն կու գար ինքն Պոմպէոս ականակուտ կառքի մը վրայ բազմած, թիկանց վրայ ծիրանի ձգած՝ Աղեքսանդր Մակեդոնացոյն զղամիզը, ինչպէս կը պատմեն՝ եթէ արժանի է հաւատալու. կը համարուէր թէ այս ալ գտնուած ըլլար Միհրդատայ ուրիշ իրեղինաց հետ՝ զորս արդէն կղէոպատրա կովաջուց պահպանութեան յանձնած էր և ինքը վերստին գրաւած: Կառքին ետեւէն կու գային իրեն արշաւանաց մէջ ընկերակցող բանակաց զօրավարները, ոմանք ձիաւոր՝ իսկ այլք հետիոտն: Պոմպէոս երբ հասաւ ի կապիտոլին չսպաննեց կալանաւորներէ և ոչ մին, ինչպէս սովոր էին ընել իրմէ առաջ յաղթանակ կատարողը, այլ զա-

մէնքն ալ դարձուց վերստին իրենց հայրենիքը, պետական հասարակաց գանձով, ի բաց առեալ արքայազուն կալանաւորները, որոնց մէջէն միայն Արիստարուհուն սպաննուեցաւ նախ և առաջ, և քիչ ժամանակ յետոյ նաև Տիգրան: Պոմպէոսի յաղթական մուտքն ուրեմն այս ոճով մեծապէս կատարուեցաւ:

118. — Այս կերպով Հոռովմայեցիք իրենց պետութեան զբաւեցին Բիթանացիները, կապաղովկացիները և Եւքսինեան Պոնտոսի մերձակից ուրիշ բոլոր գաւառները, յետ գրեթէ քառասուն երկու տարի պատերազմելու՝ զՄիհրդատ բառնալով ի միջոյ: Մի և նոյն պատերազմով հպատակեցուցին իրենց կիլիկիոյ մէջ ալ այն ամէն գաւառները որ զեռ իրենց չէին հնազանդիր: Ասորոց մէջ ալ գփիւնիկէն, կելեսիոսի և Պաղեստինը. մանաւանդ թէ շարունակելով զեռ յաղթական ընթացքը, զբաւեցին Եփրատայ մօտ ներքին գաւառները որոնք բնաւ Միհրդատայ չէին պատկաներ: Եւ հարկատու կարգեցին ասոնցմէ զոմանս իսկոյն, զոմանս ալ հետզհետէ քիչ վերջը՝ Պափլագոնիան, Գաղատիան, Փոփիզիան, Միւսիան որ սահմանակից է Փոփիզիոյ, և յետոյ Լիւդիան, կարիան, Յոնիան, ամբողջ Ասիան որ առաջ կը պատկանէր Պերգամոնի իշխանութեան, հինն Յունաստանը, Մակեդոնիան՝ ուր սպառտակեր էր Միհրդատ, բոլոր այս գաւառները շուտով զբաւեցին վերստին. և հարկատու ըրին իրենց ասոնցմէ շատերը որ զեռ բնաւ հարկատու չէին եղած: Ուստի ինձ այնպէս կը թուի թէ այս

1. Պլուտարքոս կը յիշատակէ որ այս գրաւուած գաւառներու և թագաւորութեանց մէջ առնուած էին ընդ ամէնը ոչ նուազ քան հազար զինակներ, և քիչ պակաս ինչ հարիւր քաղաքներէ, և ութ հարիւր ծովափէններու նաւեր. և երեսունիկն քաղաքներ ալ իրմով վերստին բազմամարդ եղած էին: Բաց աստի գրուած տախտակներէ կը տեսնուէր յայտնապէս, որ այն օրէն առաջ հասարակապետութեան տարեկան մուտքն

էր հինգ հարիւր միլիոն, և իրեն յաղթանակած քաղաքներու գրաւմանէն վերջ պետական մուտքը կը բարձրանար ութ հարիւր յիսուն միլիոնի: Իսկ արծաթի և ոսկու քանակութիւնը զոր իբրև դրամ կամ իբրև անօթիներ հասարակաց գանձին կը բերէր, քան հազար տաղանդ էր, բաց ի այն ամէնէն որ բաշխուեցաւ զինուորաց, որոնցմէ շեղաւ բնաւ մէկն որ հազար հինգհարիւր դահեկանէ նուազ առած ըլլայ: »

պատերազմը մեծ համարեցին, և անոր ստացուած յաղթութիւնն ալ մեծ անուանեցին, և հայրենի անուանակոչութեամբ ալ մեծ պատուանունը տուին Պոմպէոսի որ այս յաղթանակը տարած էր, որովհետև բազմաթիւ էին վերստին պարտուած կամ նորոգ գրաւուած ժողովուրդները, շատ երկար էր պատերազմին տևողութիւնը, քառասուն տարիէն աւելի, և ամենամեծ էր Միհրդատայ յանդգնութիւնը և յարատևութիւնը, որ ամէն բանի մէջ աննկուն և զօրաւոր հանդիսացաւ:

119. — Անտարակոյս Միհրդատ ունեցաւ շատ անգամներ չորս հարիւրէն աւելի նաեօր, երբեմն յիսուն հազար միատր զինուորաց սապախուսք մը, երկու հարիւր յիսուն հազար հետևակազօրք, և մեքենայք ու սպառազինութիւնք որքան կրնային պէտք ըլլալ այսքան բանակաց միանգամայն կ'օգնէին իրեն վեհապետներ և իշխաններ, ինչպէս Հայոց թագաւորը, Պոնտոսի և Մէդոիտեան ճախճախուտներու շուրջը գտնուող Սկիւթացոց իշխանները, և բոլոր անոնք որ Պոնտոսէն մինչև ի Թրակեան Պոսփոր կը գտնուէին. դեսպաններ զրկեց Հռովմայ մեծամեծներու, որոնք կուսակցական խնդիրներով հակառակութեան մէջ էին իրարու հետ, և որոնք Սպանիան ալ սպասամբեցուցած էին ընդդէմ Հռովմայ. բարեկամութիւն հաստատեց կեդոաց հետ, այն դիտմամբ որ անոնց հետ միացած պիտի արշաւէր իտալիոյ վրայ. ծովահէններու խումբերով լեցուց ծովերը՝ կիլիկիայէն սկսեալ մինչև Հերակլեան Սիւները. և ասոնք ընդհատեցին քաղաքաց միջև վաճառականութիւնն ու նաւարկութիւնը, և պատճառեցին երկարատև ու տաժանելի սով: Վերջապէս, ինչ որ կարելի էր իրեն մարդկորէն, զանց չըրաւ բնաւ բան մը խորհելու և փորձելու, որպէս զի այսքան ընդարձակածաւալ յուզում մը, որ Արևելքէն մինչև յԱրևմուտս կը տարածուէր, խռովէր զամենքն ալ, այսպէս ըսելու համար, որպէս զի բռնադատուէին պատերազմին մասնակցիլ կամ իւրաքանչիւրն

իրենց հաշուին և կամ այլոց հետ դաշնակցելով, ապա թէ ոչ ծովահէններէ տագնապէին կամ այսպիսի մերձաւոր աղէտներէ տառապէին: Այսքան մեծ, այսքան բազմազան եղաւ այս պատերազմը որ այնքան մեծութիւն պատճառեց Հռովմայ, և երբ դադրեցաւ՝ Հռովմական պետութիւնն ընդարձակուած գտաւ իւր սահմաններն Արևմտից ծայրերէն մինչև Եփրատ:

Հ. Յ. ԱԻԳԵՐ

ՀՆԴԱԿԱՆ ՄԵՑ ԳՈՒՍԱՆԵՐԳՈՒԹԻՒՆ
ՄԱՀԱՊՀԱՐԱԴԱ

Ո՛րքան անգամներ յիշուած են հնդկական վէպերն ու դիցազոներգութիւնք, առանց որոշ գաղափար մ'ունենալու անոնց վրայ. որքան անգամներ համեմատուած են անոնք մեր ազգային աւանդութեանց հետ, մեր Գողթեան գրասանաց պատահիկներու հետ, առանց սակայն լաւ ճանչնալու: Հնդկական մատենագրութիւնն յաճախ կարծէք չինական աւանդական պարիսպներու ետև պահուած, անմատչելի եղած է մեր բանասիրաց, ոչ այնքան անշուշտ իրեն դժուարութեան պատճառաւ, որ միշտ համեմատական է, և չեն պակսիր եւրոպական ծանօթ լեզուներով ընտիր թարգմանութիւններ, որքան մեղադրելի արհամարանութեամբ և անհոգութեամբ որով հետամուտ եղած չենք ընդհանրապէս աւելի մօտ ծանօթութիւն մ'ունենալ ազգի մը գաղափարաց զարգացման հետ, որ շատ սերտ յարաբերութեամբք կապուած է հայ տարրին հետ, և զոր շատ ազգային պատճառներ պիտի յօժարեցնէին քննելու և ուսումնասիրելու:

Առաջիկայ տողերու մէջ դիտուեմ չունինք բնաւ ուրիշները մեղադրելու, այլ լոկ ցաւալի իրողութիւն մը մասնանշելով, կ'ուզենք ապագայից մէջ զարթու-